# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 35 - 36 (16736) ՇԱԲԱԹ 4 ՄԱՅԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԱՊՐԻԼԻ 30-Ը ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐՆ Է

## ԲԱՆԱԿԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՆԱՍՅՈՒՆ

*Ապրիլի 30-ը վրացական բանակի օրն է: Վրաստանի պաշտպանության ուժերը նշեցին հիմնադրման 28 տարին:*



Վրաստանի բանակի օրվան նվիրված միջոցառումները մեկնարկեցին Վրաստանի պաշտպանության նախարարության կառավարման կենտրոնում, որտեղ պաշտպանության նախարար Լեւան Իզորիան շնորհավորեց միջազգային առաքելություններին մասնակից զինվորականներին:

Ավելի ուշ, Մախաթի սարում, զինծառայողների համար բնակարանային պայմանների բարելավման նպատակով, տեղի ունեցավ նոր նախագծի շնորհանդեսը: Նոր բնակարանների կառուցման հիմքը գցեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն եւ պաշտպանության նախարար Լեւան Իզորիան:

Հիմնական միջոցառումը կայացավ Վազիանիում, IV մեխանիզացված բրիգադի տարածքում:

Բանակի օրվան նվիրված հանդիսությա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## «2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՐԿԻՐԸ»



*Ապրիլի 30-ին, Եվրախորհրդին Վրաստանի անդամագրության 20-ամյակի կապակցությամբ, երկրի խորհրդարանում անցկացվեց տոնական նիստ: Օրվա առիթով խորհրդարան էին ժամանել Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, հատուկ հոբելյանի կապակցությամբ Թբիլիսի ժամանած Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիեն Մորի Պասկյեն:*

Տոնական նիստը բացեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն: Իրենց ելույթներում Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիեն Մորի Պասկյեն, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, երկրի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին կանգ առան 20-ամյա վաղեմության իրադարձության պատմական նշանակության վրա, ընդգծեցին երկրի, ժողովրդի համար բեկումնային դեր կատարած սույն որոշման կարեւորությունը: Ելույթ ունեցողները նշեցին նաեւ նորան-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑ

## ՆՈՐԱՍՏԵՂԾ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ



*Մայիսի 1-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի նախագահությամբ անցկացվեց երկրի ազգային անվտանգության խորհրդի անդրանիկ նիստը:*

Նիստին, որին, անդամներից բացի, ներկա էր նաեւ Վրաստանի նախագահի ներկայացուցիչ Գիորգի Մսխիլաձեն, ազգային անվտանգության խորհրդի նորանշանակ քարտուղար, երկրի փոխվարչապետ եւ արտաքին գործերի նախարար Գիորգի Գախարիան, ներկայացվեց վարչապետին առընթեր խորհրդակցական մարմնի կառուցվածքը: Ինչպես նշվեց նիստում, խորհրդին վերապահվել է ռազմավարական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԵՐԲ ԽՈՍՔԸ ԳՈՐԾԻՑ ՉԻ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ

### ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՍԿՍՎԵՑԻՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

*Մայիսի 1-ին, 2019 թվականին ենթակառույցների զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերի ընթացքին ծանոթանալու նպատակով, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում էր գտնվում Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Իրակլի Քարսելաձեն:*

Իրակլի Քարսելաձեն երկրի կենտրոնական գործադիր իշխանության այլ ներկայացուցիչների հետ, Սամցխե-Ջավախեթիի երկրամասի պետական լիազոր նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների ինքնակառավարման մարմինների ղեկավարների ուղեկցությամբ, եղավ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գորելովկա գյուղում, որտեղ ծանոթացավ Նինոծմինդա-Հայաստանի սահման 22 կմ երկարությամբ ճանապարհի շինարարության գործընթացին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ...

*Մայիսի 9-ին նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 74-րդ տարին:*



1945 թվականի մայիսի 1-ին, ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, կիսաքանդ Ռայխստագի գմբեթին փողփողացող Հաղթանակի դրոշը ազդարարեց խորտրդային ժողովրդի համար Հայրենական մեծ պատերազմի ավարտը:

Իսկ մայիսի 9-ին ստորագրվեց Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում, հաղթանակով պսակվեց 1418 օր ու գիշեր տեւած մահուկենաց կռիվը:

Մեծ հաղթանակի գործում իրենց արժանի ներդրումն ունեցան նաեւ վրաց եւ հայ ժողովուրդները, որոնք առանձնակի թանկ վճարեցին այդ հաղթանակի համար՝ նրանցից յուրաքանչյուրը զոհասեղանին նվիրաբերեց իր հազարավոր զավակների կյանքը:

## ...ԵՎ ԿՆՃՎԻ ՀԱՅՈՑ ԵՌԱՏՈՆԸ

Այդ օրը՝ մայիսի 9-ին, համայն հայությունը տոնում է իր հաղթանակների Եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 74, Արցախի բանակի կազմավորման ու Շուշիի ազատագրման 27-րդ տարելիցները:

Տոնի առիթով ծրագրված են մի շարք միջոցառումներ, որոնց մանրամասները կներկայացվեն հաջորդ համարում:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԴՈՒՔ ՀԱՂԹԵԼ ԵՔ, ԵՎ ԴՈՒՔ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՔ»

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՇԵՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐԸ

*Հայաստանում առաջին անգամ, ապրիլի վերջին շաբաթ օրը, նշվեց Քաղաքացու օրը: Ապրիլի 27-ին տոնի առիթով ողջ երկրում անցկացվեցին բազմաբնույթ միջոցառումներ:*



Օրվա առիթով, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանի Մաշտոցի պողոտայում մասնակցեց տոնական միջոցառումներին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ



Ապրիլի 30-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նորանշանակ նախարար Նաթիա Թուրնավան հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Հանդիպմանը Ռուբեն Սադոյանը շնորհավորեց Նաթիա Թուրնավային պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեց հետագա գործունեության մեջ:

Կողմերն անդրադարձ կատարեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական մի շարք հարցերի, մասնավորապես, էներգետիկ ոլորտին առնչվող թեմաներին: Անդրադարձ կատարվեց նաեւ հայ բեռնափոխադրողներին առնչվող հարցերին:

Զրուցակիցները պայմանավորվածություն ձեռք բերեցին պարբերական դարձնել ոլորտային ուղղություններով երկկողմ շփումներն ու փորձի փոխանակումը:

ԱՊՐԻԼԻ 30-Ը ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐՆ Է

# ԲԱՆԱԿԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՆԱՍՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը, իր խոսքում Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ վրացական բանակը վիթխարի ավանդ է ներդրել անկախ եւ ժողովրդավարական Վրաստանի շինարարության գործում:

- Քանուք տարի է, ինչ գոյություն ունեն վրացական զինված ուժերը, եւ այդ 28 տարիները Վրաստանի համար հագեցված էին լուրջ մարտահրավերներով: Դուք նշանակալի ավանդ ներդրեցիք Վրաստանի այն ուղու հաջող առաջընթացի գործում, որը կոչվում է մեր երկրի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրում,- հայտարարեց վարչապետը:

Իր խոսքում, շնորհավորելով վրաց զինծառայողներին բանակի օրվա առիթով, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ իր ստեղծման օրից բանակը Վրաստանի անկախության հիմքն է:

- Դուք երկրի ողնաշարն եք, բոլոր այս տարիներին անձնազոհության եւ վրաց զինվորի արհեստավարժության բազմաթիվ օրինակներով ապացուցվել է, որ մեզ համար կարեւորագույնը պատիվն է: Այդպես է եղել պատմականորեն, եւ դրան ոչինչ չի կարող սպառնալ,- ընդգծեց երկրի նախագահը:

Բանակի օրվա կապակցությամբ, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին երկրի Զինված ուժերի ութ ներկայացուցիչներին շնորհել է գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի եւ բրիգադի գեներալի կոչում: Մասնավորապես, Վրաստանի պաշտպանության փոխնախարար, գնդապետ Նիկոլոզ Ջանջղավային շնորհվել է բրիգադի գեներալի կոչում, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Չաչիբաիային՝ գեներալ-լեյտենանտի կոչում: Նաեւ զինվորականներին փոխանցվելու են «Գեներալ Կվինիտաձե» եւ «Գիորգի Անծուխելիձե» շքանշաններ:

Պաշտոնական արարողությունից հետո, հյուրերին հնարավորություն տրվեց դիտել ռազմական տեխնիկան:

Հոբելյանական միջոցառմանը ներկա էին գործադիր եւ օրենսդիր իշխանությունների, ինչպես նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ 1990 թվականի դեկտեմբերին, Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ, Վրաստանի ներքին գործերի նախարարությունից կազմավորվեց ներքին զորքեր-ազգային գվարդիա:



ԻՍՊԱՆԻԱ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ ԵՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

*Իսպանիայի սոցիալիստական աշխատանքային կուսակցությունը (ԻՍԱԿ)՝ Պեդրո Սանչեսի գլխավորությամբ, հաղթանակ է տարել ապրիլի 28-ին, երկրում անցկացված վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում, եւ կփորձի կառավարություն կազմել:*

*Քվեաթերթիկների 99,9 տոկոսի արդյունքների ամփոփումից հետո, սոցիալիստները 123 մանդատ են ստանում 350 տեղանոց Պատգամավորների կոնգրեսում: Խորհրդարանի նախորդ կազմում այն ուներ միայն 85 տեղ:*

*Երկրորդ տեղում աջ ժողովրդավարական կուսակցությունն է՝ 66 մանդատով, երրորդում՝ կենտրոնամետ «Քաղաքացիներ» կուսակցությունը՝ 57 մանդատով:*

*Unidas Podemos ձախ կոալիցիան կարողացել է 42 տեղ ստանալ ստորին պալատում: Առաջին անգամ Պատգամավորների կոնգրես է անցել VOX ծայրահեղ աջ կուսակցությունը, որը կունենա 24 պատգամավոր:*

ՈՒԿՐԱԻՆԱ

### ՊՈՐՈՇԵՆԿՈՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՄԵԿՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂԱՆԱ

*Ուկրաինայի նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրողների 73,22 տոկոս ձայներով հաղթանակած Վլադիմիր Զելենսկու թիմը հավանություն է տվել պետության գործող նախագահ Պյոտր Պորոշենկոյի եւ նրա մերձավոր շրջապատի՝ արտասահման մեկնելու արգելքի մասին հանրագրին: «Յուրաքանչյուր հանցավոր գործի համար միշտ էլ արժանի պատասխան կգտնվի»,- նշել է Զելենսկու շտաբը:*

*Զելենսկու ներկայացուցիչներն այսպես են արձագանքել լրագրող Ալեքսանդր Դուբինսկու դիմումի վերաբերյալ տեղեկատվությանը Կիեւի Օկրուգային վարչական դատարան. նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացումից հետո մեկ տարվա ընթացքում Պյոտր Պորոշենկոյին, նախագահի վարչակազմի ղեկավար Իգոր Ռայնինին եւ Գերագույն ռադայում «Պյոտր Պորոշենկոյի դաշինք» խմբակցության ղեկավարի առաջին տեղակալ Իգոր Կոնոնենկոյին՝ երկրի սահմաններից դուրս գալն արգելելու խնդրանքով:*

ՃԱՊՈՆԻԱ

### ՍԿՍՎՈՒՄ Է ՆՈՐ ԿԱՅՍԵՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

*Ճապոնիայի բնակիչները նշում են գահից Ակիհիտո կայսեր կամավոր հրաժարվելը, որը գահակալում էր 1989 թվականի հունվարի 8-ից:*

*Ճապոնիայի Ակիհիտո կայսրը հրաժեշտի եւ երախտագիտության ուղերձ հղեց ազգին: Գահից Ակիհիտո կայսեր հրաժարման արարողությանը, Ակիհիտո կայսեր ու նրա տիկնոջ հետ միասին, մասնակցում էին գահաժառանգ Նարուհիտոն՝ տիկնոջ հետ, կայսերական ընտանիքի անդամները, ինչպես նաեւ վարչապետը, իշխանության երեք թեւերի ներկայացուցիչներ՝ շուրջ 300 մարդ:*

*Նշենք, որ Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեն ապրիլի 30-ին պաշտոնապես հայտարարեց գահից Ակիհիտո կայսեր հրաժարման մասին: Նարուհիտոն Ճապոնիայի նոր կայսրը դարձավ մայիսի 1-ից եւ ընտանիքի հետ տեղափոխվեց կայսերական պալատ: Հանգստի գնացած կայսրը՝ տիկին Միտիկոյի հետ, որոշ ժամանակ կապրի Տականավայի շրջանում գտնվող պալատում, քանի դեռ նորոգման աշխատանքներ կընթանան Տոգու պալատում (բառացիորեն՝ «Արեւելյան պալատում»):*

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# «2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՐԿԻՐԸ»



(Սկիզբը՝ 1-ին էջում)

կախ Վրաստանի պատմության մեջ Եվրախորհրդի կատարած նշանակալի դերի մասին, խոսեցին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի հետ Վրաստանի սերտ համագործակցության, վերջինիս կողմից ցուցաբերվող աջակցության մասին:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն իր խոսքում, մասնավորապես, հայտարարեց, որ Վրաստանը Եվրոպայի խորհրդի նախագահող երկիրը կդառնա 2019 թվականի աշնանը:

- 2019 թվականի աշնանը մեր պետականության պատմության մեջ եւս մեկ էջ կգրվի, երբ Վրաստանը դառնա Եվրոպայի խորհրդի նախագահող երկիր,- նշեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ երկրի իշխանություններն աշխատում են այն գերակայությունների վրա, որոնք գործողության գլխավոր ծրագիրն են լինելու նախագահելու ժամանակաշրջանում: Վրաստանը նախագահությունը կընդունի նոյեմբերին Ֆրանսիայից, որն, իր հերթին, այն մայիսին կստանա Ֆինլանդիայից: Վրաստանն առաջին անգամ Եվրախորհրդի նախարարների կոմիտեն կգլխավորի կես տարի մինչեւ 2020 թվականի մայիսը:

Նշենք, որ մինչեւ Վրաստանի խորհրդարանում տոնական նիստի բացումը, Վրաստանում այցով գտնվող Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիան Մորի Պասկյեն հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու եւ վարչապետ Մամուկա Բախտաձեի, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ:

Բացի այդ, նա այցելեց դիմակայության գոտում գտնվող Ծերովանի եւ Օձիսի գյուղեր:

ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑ

# ՆՈՐԱՍՏԵՂԾ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մակարդակով ազգային անվտանգության քաղաքականության ծրագրավորման ու համակարգման գործառույթը: Ազգային անվտանգության խորհուրդը համակարգման մարմին է բոլոր գերատեսչությունների համար, որոնք մասնակցում են երկրի անվտանգության ապահովման գործին, եւ խորհուրդը վարչապետին ապահովելու է երկրի անվտանգության հետ կապված տեղեկատվության ողջ ծավալով: Ինչպես նշվեց նիստում, վարչապետը իրավասու է խորհրդի յուրաքանչյուր անդամին տալ հանձնարարական, եւ խորհրդի քարտուղարը վերահսկելու է տրված հանձնարարության կատարման ընթացքը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ՀԱՍՏԱՏՎԵՑ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԻՆԱԳԻԾԸ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

*Մայիսի 1-ին Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ հաստատեց «Ընդհանուր դատարանների մասին» օրինագիծը:*

Օրենսդիր մարմնի լիագումար նիստին Գերագույն դատարանի դատավորների ընտրության կարգի վերաբերյալ մեծամասնության կողմից պատրաստված օրենսդրական փաթեթը ներկայացրեց իրավաբանական հարցերով կոմիտեի նախագահ Անրի Օխանաշվիլին: Նախագծի օգտին քվեարկեց 87 պատգամավոր, դեմ՝ 33-ը:

Խորհրդարանական մեծամասնության կողմից պատրաստված փոփո-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԻՋԱԴԵՊ

# ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԴԱՎԻԹ ԳԱՐԵՋԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՐՑՈՒՄ

*Դավիթ Գարեջին եզակի քարանձավային վրացական վանքերի համալիր է: Այն գտնվում է Թբիլիսիից հարավ-արեւելք, 60 կմ հեռավորության վրա եւ լեռնաշղթաների երկայնքով զբաղեցնում է 25 կմ տարածք:*

*Համալիրը բաղկացած է մոտ 20 ժայռափոր վանքերից: Համալիրի գլխավոր վանքը համարվում է Սուրբ Դավթի տաճարը: Շատ վանք-վանախցերում պահպանվել է VIII-XIV դդ. որմնանկարներ: Որմնանկարների վրա պատկերված են պատմական դեմքերի դիմանկարներ, այդ թվում՝ Թամար թագուհու: Համալիրի մեծ մասը, դրանց թվում եւ Ուդաբնո վանքը, գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող սարի հարավարեւմտյան լանջին:*

Հնագույն քարանձավային վրացական վանական համալիրը՝ Դավիթ Գարեջին, հասարակական ուշադրության կենտրոնում հայտնվեց այն բանից հետո, երբ ԶԼՄ-ներում հայտնվեց տեղեկություն այն մասին, որ մի քանի օր առաջ ադրբեջանցի սահմանապահները սկսել էին վանական համալիրի մուտքի մոտ տեղադրել տեղաշարժն արգելող նշաններ: Ադրբեջանական կողմի գործողությունները բողոքարկեցին վրաց հասարակության ներկայացուցիչները: Բողոքի ցույցին մասնակցեցին նաեւ հոգեւորականներ: Սոցցանցերում հայտնվեցին ստեղծված իրավիճակն է'լ ավելի սրող մեկնաբանություններ:

Վրացական կողմը հասարակությանը կոչ արեց խուսափել թեմայի քաղաքականացումից՝ հավաստիացնելով, որ հարցը մոտ ժամանակներում կկարգավորվի:

- Ուզում եմ բոլորին կոչ անել՝ հաշվի առնել հարցի զգայունությունը եւ հատուկ զգուշությամբ վերաբերվել թեմային,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Զալկալիանին: Նրա խոսքով, մոտ ապագայում համատեղ հանձնաժողովը կվերսկսի աշխատանքները սահմանի դելիմիտացիա-դեմարկացիայի համար համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

Հիշեցնենք, որ Վրաստանը եւ Ադրբեջանը 446 կմ ընդհանուր սահման ունեն, որի մեկ երրորդ մասում դեռեւս սահմանազատում չի արվել: Պետական սահմանի սահմանազատման եւ սահմանագծման վրաց-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողովը ստեղծվել է 1996թ.-ին:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՀԱՍՏԱՏՎԵՑ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԻՆԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

խություններով սահմանվել են Գերագույն դատարանի դատավորների թեկնածուներին ընտրելու չափանիշները, Արդարադատության Գերագույն խորհրդի կողմից թեկնածուների ընտրությունը եւ այն խորհրդարանին ներկայացնելու գործընթացը:

Օրինագծի երկրորդ ընթերցման ժամանակ, նախաձեռնության մեջ մտցվել է մի քանի փոփոխություն, եւ նախագծում արտացոլվել են Վենետիկի հանձնաժողովի մի քանի հանձնարարականները, այդ թվում՝ չեղարկվել են Գերագույն դատարանի դատավորների թեկնածուների որակավորման ընտրությունները:



Մայիսի 2-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենքում փոփոխությունների մասին օրինագիծը:

Նախագահի վարչության տեղեկությամբ, նախագահի եւ խորհրդարանի նախագահի միջեւ անցկացված խորհրդակցությունների հետեւանքով, փաստաթղթում, երկրորդ ընթերցմամբ, հաշվի են առնվել սկզբունքային հանձնարարականներ, որոնք պատկերվել են Վենետիկի հանձնաժողովի եզրահանգման մեջ:

Նրանց տեղեկությամբ, իրականացված փոփոխությունները կնպաստեն Գերագույն դատարանի դատավորների առավել բաց, թափանցիկ ընտրությանը, եւ նախագահը հույս է հայտնում, որ այն դրական կարտացոլվի դատարանների նկատմամբ վստահության մակարդակի բարձրացման վրա:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

## ՌՈՒՍԼԱՆ ԱԲԱՇԻՁԵՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ



Մայիսի 1-ին Աբխազիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավարի պաշտոնակատար Վախթանգ Կոլբաիան պաշտոնաթողության դիմումով դիմել է Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդին: Ինքնավար Հանրապետության նոր գործադիր իշխանության նոր ղեկավարի ընտրության համար, Գերագույն խորհրդում անցկացվեց խորհրդատվություն: Գերագույն խորհրդի պատգամավորների մեծ մասը Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահի պաշտոնում պաշտպանեց Ռուսլան Աբաշիձեի թեկնածությունը:

Հանդես գալով պատգամավորների առջեւ՝ Ռուսլան Աբաշիձեն խոստացավ առաջիկա օրերին ներկայացնել կառավարության գործողության ծրագիրն ու ձեռնամուխ լինել նոր կառավարության կազմավորմանը:

Նշենք, որ Ռուսլան Աբաշիձեն, մինչ այդ նշանակումը, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի տեղակալն էր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՎԵՑ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ»

***Մայիսի 3-ին Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի «Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական միությունում» (ENQA) անդամակցության առնչությամբ Թբիլիսիում անցկացվեց «Եվրոպական որակի բարձրագույն կրթություն» միջոցառումը:***

Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին: Միջոցառմանը ներկա են նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, խորհրդարանի անդամներ, բարձրագույն կրթական հաստատության ռեկտորներ, կրթության փորձագետներ եւ Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչներ:

Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական միության նախագահությունը Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի անդամակցության մասին որոշումը կայացրել է ապրիլի 25-ին Էստոնիայի մայրաքաղաք Տալինում անցկացված ամենամյա 9-րդ համաժողովին:

Կրթության նախարարության տեղեկությամբ, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ կնքված Ասոցիացման համաձայնագրով, Վրաստանն ստանձնել է պարտականություն, որ Վրաստանի բարձրագույն կրթության համակարգը աստիճանաբար մոտենա «Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքին»:



### ԴԵՎԻԴ ՄՈՐԻՍՈՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆ



*Մայիսի 1-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն Թբիլիսիի բուսաբանական այգում ներկայացրեց իր իսկ նախաձեռնությամբ բնապահպանական իրավունքների եւ շահերի պաշտպանության նպատակով ստեղծված նոր կառույցի ղեկավար, բնապահպանության օմբուդսմենին՝ Դեյվիդ Մորիսոնին:*

*Օմբուդսմենի ղեկավարությամբ կքննարկվեն բնապահպանական արդի հիմնախնդիրները՝ կոնկրետ հարցերի շուրջ:*

*Շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին խոսեց օմբուդսմանի ինստիտուտի կարեւորության մասին եւ նշեց, որ «Կանաչ քաղաքականության» շրջանակներում նախատեսվող միջոցառումներին հասարակության ներգրավումը շատ կարեւոր է:*

### ՆԵՐՈՒՄ՝ 42 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Զատկի տոնի նախաշեմին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ներում շնորհեց 42 դատապարտյալի:*

*Ինչպես հայտնեցին նախագահի աշխատակազմից, Վրաստանի նախագահը ներում է շնորհել 19 դատապարտյալի, նրանցից երկուսը՝ կին, որ պատիժ էին կրում պատժական հիմնարկություններում: Նրանք բոլորն արդեն ազատ են արձակվել:*

*Նախագահը նաեւ ներում է շնորհել 23 պայմանական դատապատյալների, որոնցից երկուսը՝ կին: 21 պայմանական դատապարտյալ լիովին ազատվել է պատիժը կրելուց, այդ թվում՝ երեք դատապարտյալից հանվել է պաշտոնի զբաղեցման արգելքը:*

*Եվս երկու դատապարտյալների նկատմամբ կրճատվել է պայմանական պատիժ կրելու ժամկետը:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Ապրիլի 17-18-ը Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը մասնակցեց Վրաստանի ազգային համալսարանի Թբիլիսիի ազատ եւ Վրաստանի ագրարային համալսարանների կողմից կազմակերպված զբաղվածության խորհրդաժողովներին: Եկամուտների ծառայության մարդկանց ռեսուրսների կառավարման եւ զարգացման դեպարտամենտի աշխատակիցներն ուսանողներին լիարժեք տեղեկատվություն հանձնեցին ծառայության կառուցվածքի եւ գործառույթների մասին, ինչպես նաեւ եկամուտների ծառայությունում աշխատանքի տեղավորվելու եւ առաջընթացի վերաբերյալ: Ֆինանսների ծառայության եկամուտների ծառայությունը՝ որպես խոշոր գործատու, շահագրգռված է արհեստավարժ կադրերի նախապատրաստման հարցում: Կադրերի ընտրության գործընթացը գերատեսչությունում մշտական պայմանակարգով է իրականացվում:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ՍԻԳԱՐԵՏ

Ապրիլի 24-25-ը Սադախլո ավտոմոբիլային եւ Կարմիր կամուրջ մաքսային անցակետերում կանխվեց երկրի տարածք օրենսդրության խախտմամբ չհայտագրված սիգարետ ներկրելու փաստը: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները՝ կասկածի հիման վրա, խուզարկել են Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցները: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է չհայտագրված 8880 գլանակ սիգարետ:

Վրաստանի հարկային օրենսգրքի համաձայն, օրինախախտում թույլ տված քաղաքացիների մաքսանենգային ապրանքը, տրանսպորտային միջոցները բռնագրավվել են, իսկ օրինախախտները տուգանվել են 1000-ական լարի գումարով:

## RS CAR-Ի ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ

***Մայիսի 3-30-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոն RS CAR-ը հարկատուներին սպասարկումներ կմատուցի երկրի մասշտաբով 30 վայրերում, այն երկրամասերում, որտեղ տեղակայված չեն եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններ:***




RS CAR միկրոավտոբուսը հագեցված է եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում առկա տեխնիկական միջոցներին համապատասխան: Հարկատուները կարող են իրենց հարմար ժամանակահատվածում, առանց բնակավայրից դուրս գալու, ժամանակին ստանալ ցանկալի սպասարկում:

Եկամուտների ծառայության RS CAR շարժական սերվիս-կենտրոնը **մայիսի 3-ին** կգործի **Թեթրիծղարոյում**, Թամար թագուհու թիվ 34-ում, վարչության հարակից տարածքում, **մայիսի 21-ին՝ Ասպինձայում**, Թամար թագուհու փողոցում, «TBC բանկի» հարակից տարածքում, **մայիսի 23-ին՝ Նինոծմինդայում**, Պուշկինի փողոցում, վարչության շենքի հարակից տարածքում:

Նշենք, որ բոլոր վերոնշյալ վայրերում շարժական RS CAR սերվիս-կենտրոնները կգործեն ժամը 10:00-17:00-ը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԵՐԲ ԽՈՍՔԸ ԳՈՐԾԻՑ ՉԻ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ

(Սկիզբը` 1-ին էջում)

Ինչպես նշեց փոխնախարարը, 2019 թվականը Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի համար բեկումնային կլինի:

- 110 միլիոն լարի կտրամադրվի ճանապարհաշինության, ջրատար համակարգի անցկացման եւ դպրոցաշինության համար: Կիրագործվեն մի քանի տասնյակ խոշոր ծրագրեր եւ, իհարկե, այդ ամենը ձեր մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի աշխատանքի արդյունքն է. մարդ, ով ամեն ինչ անում է իր շրջանների զարգացման եւ բարգավաճման համար: Բառացիորեն օրերս, Հենզել Մկոյանի հետ հանդիպեցի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի մոտ, որտեղ էլ մանրամասն խոսեցինք իրականացվելիք աշխատանքների մասին,- ասաց Իրակլի Քարսելաձեն:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարարն անդրադարձավ նաեւ «Վրացական երազանքի» կողմից նախընտրական փուլում արված խոստումներին եւ հայտարարեց, որ այն, ինչ խոստացել էին 2018 թվականին, թղթի վրա չմնաց.

- 2019 թվականին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում կիրականացվի 25 խոշոր նախագիծ, որոնցից 20-ը կավարտվի ընթացիկ տարում, իսկ մնացածը` 2020 թվականին: Միայն Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետներում կկառուցվի 128 կմ ճանապարհ, այդ թվում` 22 կմ Նինոծմինդայից-Բավրայի անցակետ, 16 կմ` Նինոծմինդա-Ախալքալաքի, 16կմ` Ախալցիխե-Ախալքալաքի, ինչպես նաեւ Ախալքալաքիի անցումային ճանապարհը, Ախալքալաքի-Կորխ կամուրջը, Նարդեւան-Ծալկա ճանապարհը, Ախալքալաքիի մունիցիպալիտետում կասֆալտապատվի Բավրա-Կարտիկամ, Վաչիան-Հոկամ, Արագվա-Գոման-Զակ, Կաջո-Ալաթուման, Խանդո գյուղերի ճանապարհները, Նինոծմինդայում կասֆալտապատվի Նինոծմինդա-Դիլիֆ, Նինոծմինդա-Հեշտիա, Նինոծմինդա-Օրոջալար գյուղերի ճանապարհները, ինչպես նաեւ քաղաքի տարբեր փողոցներ: 128 կիլոմետր ճանապարհների ասֆալտապատման համար հատկացվել է 84 միլիոն լարի:

Փոխնախարարի հավաստմամբ, Նինոծմինդա-Հայաստան ճանապարհի 15 կիլոմետրանոց հատվածը, որը վերանորոգվում է 2018 թվականի հունիսից, կավարտվի այս տարվա սեպտեմբերին:

- Վերջին 10 տարիների ընթացքում այս ճանապարհահատվածը նման հիմնարար վերանորոգման չի ենթարկվել,- հավելեց փոխնարարարը:

- Մենք կունենանք միջազգային չափանիշներին համապատասխան, ժամանակակից, անվտանգ ճանապարհ: Մայիսի վերջին պատրաստ կլինի Նինոծմինդա-Հայաստան ճանապարհի այլ հատվածի վերականգնման նախագիծը, որը կսկսվի Նինոծմինդայից եւ կլինի 8 կմ: Աշխատանքները կսկսվեն արդեն հունիսին, իսկ մինչեւ 2019թ. հոկտեմբեր վերականգնումն ամբողջությամբ պետք է ավարտվի,- ասաց Իրակլի Քարսելաձեն: Փոխնախարարն անդրադառնալով նաեւ իրականացվող աշխատանքների որակի հարցին` նշեց, որ հատուկ վերահսկողություն կսահմանվի, որպեսզի աշխատանքները համապատասխանեն սահմանված չափանիշներին:

- Բացի այդ, այսօր մենք իրականացնում ենք ոչ թե ասֆալտապատում, այլ ճանապահի հիմնակառուցում, եւ այս ամենը շնորհիվ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանի, որ ժամանակին խնդիրը զգում եւ փոխանցում է կառավարությանը,- նշեց փոխնախարարը եւ հավելեց.

- Մենք տեղական իշխանությունների, տարածաշրջանի ղեկավարների, այս շրջանի պատգամավորների հետ միասին աշխատում ենք այնպես անել, որ վերականգնվեն բոլոր հիմնախնդրային հատվածները:

Ըստ Իրակլի Քարսելաձեի, ճանապարհը վերանորոգվում է շատ բարձր որակով` 120 սմ-ոց նոր հիմքով, 11 սմ երկշերտ ասֆալտով:

Իր հերթին, Ախալքալաքիից եւ Նինծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնաական պատգամավոր Հենզել Մկոյանը իրականացված եւ իրականացվելիք նախագծերի հաջող ընթացքը վերագրեց Վրաստանի կառավարությանն ու «Վրացական երազանք» կուսակցությանը:

- Մեր բնակչությանն ուզում եմ տեղեկացնել, որ երբ ես եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները շրջեցինք Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետների բոլոր գյուղերով եւ ծանոթացանք մարդկանց հուզող հարցերին, պարզ դարձավ, որ առաջնային խնդիր է Հայաստանից մինչեւ Նինոծմինդա ճանապարհի անանցանելի վիճակը: Ես այս հարցով վերջին 20 օրվա մեջ երկու անգամ հանդիպել եմ Վրաստանի վարչապետի հետ, այնուհետեւ վարչապետի հետ միասին հանդիպեցինք տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի հետ: Քննարկումների արդյունքում խոստացան, որ մինչեւ մայիսի 10-ը կվերջացնեն բոլոր չափումային աշխատանքները եւ կհայտարարեն աշխատանքների իրականացման արագացված մրցույթ: Այս տարի 100 կմ-ից ավելի ճանապարհ ենք կառուցելու, ո՞ր թվականին է այդքան ճանապարհ կառուցվել, եթե համեմատենք նախորդ տարիների հետ, կհասկանաք, որ մենք միշտ առաջ ենք գնում, եւ սա մեր թիմային աշխատանքի արդյունքն է,- հայտարարեց Հենզել Մկոյանը:



Հիշեցնենք, որ օրերս Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը հատուկ հրավիրված մամլո ասուլիսում ներկայացրեց այն բոլոր կառավարական ծրագրերը, որոնք իրականացվելու են Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետներում:

***ՌՈՒԶԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ***

***Ախալքալաքի-Նինոծմինդա***

ՌԱՖԱՅԵԼ ՂԱՐՍԼՅԱՆ (ՋԱՎԱԽ) - 100

# ՆԱ ՄԻ ՊԱՅԾԱՌ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԷՐ...

***Նրա ողջ գիտակցական կյանքը` շուրջ 70 տարի, իր ժողովրդին նվիրումի պայծառ օրինակ եղավ, որի արդյունքում, ամբողջացավ իսկական մտավորականի կերպարը` առինքնող, անձնվեր, բազմակողմանի զարգացած ու մշտապես պատրաստ` հագեցնելու մեր լեռնաշխարհի ազգաբնակչության մշակութային քաղցը: Հրաշալի մանկավարժ էր, կրթական գործի շինարար, լրագրող էր ու դերասան, բանաստեղծ էր եւ ազգագրագետ, արձակագիր ու դրամատուրգ: Երկրային կյանքում 90 տարի ապրելուց հետո, կյանքից հեռանալով, նա մի ջերմ հիշատակ թողեց շատերի սրտում, որը չի մարում արդեն 10 տարուց ավելի...***

Ծանր մանկություն էր բաժին ընկել փոքրիկ Ռաֆայելին: Մեծ գաղթի արդյունքում, նրա անասնաբույժ Թեւան հայրը եւ Արեւհատ մայրը ստիպված էին հանգրվանել Ծալկայի գյուղերից մեկում, ուր եւ ծնվեցին յոթ երեխաներից երեքը` Ռաֆիկը, Էլիսոն, Վիկտորը: Դժվար չէ պատկերացնելը, թե ինչ ճիգերով էր հայրը հայթայթում ընտանիքի ապրուստը` անծանոթ միջավայրում աշխատելիս: Բայց մի բան պարզ է. այստեղ էր, որ մանուկը անսահման սիրեց իր վրացի ընկերներին, որը եւ հիմք հանդիսացավ հոգով կապվել վրաց մշակույթի հետ, սիրել ու գնահատել եղբայր ժողովրդին:

Յոթ տարի անց, ընտանիքը տեղափոխվեց հայրենի Բոգդանովկայի կողքին կաած Խոջաբեկ գյուղ, անասնաբույժ հայրը աշխատանքին զուգընթաց ստացավ բարձրագույն կրթություն, ծնվեցին Էլիդա, Վլադիմիր, Լյովա, Թաթուլ զավակները...

1941-ին Թեւան Ղարսլյանը մեկնեց ռազմաճակատ, ուր եւ ընդհատվեց փորձառու մայորի կյանքը:

Դժվար տարիներ տեսավ տիկին Արեւհատը, սակայն պնդեց մեջքը, լարեց ուժերը եւ, բացի վաղամեռիկ Թաթուլից, հրաշալի ընտանիքների մեծ մայրը դարձավ: Զավակներն հասակ առան, հրաշալի կրթություն ստացան, կազմեցին պատվախնդիր ընտանիքներ եւ այժմ, Վրաստանից զատ, ապրում եւ աշխատում են այլուր, անվանի են եւ հայտնի շատերին:

Ռաֆայել Ղարսլյանը 1938-ից սկսեց մանկավարժական իր ուղին: Աշխատանքին զուգընթաց, նա բարձրագույն կրթություն ստացավ Երեւանում, մայրենիի ուսուցիչ աշխատեց շրջանում ու նրանից դուրս, նաեւ երկար տարիներ` ուսմասվար, դպրոցի տնօրեն, մշակույթի տան ժողովրդական թատերախմբի ռեժիսոր...

Այսպես, ավելի քան յոթ տասնամյակ, մի'շտ հեղինակավոր, մի'շտ հարգված ու գնահատված: Քանի որ նա միայն մանկավարժ չէր, հրաշալի լրագրող էր ու գյուղթղթակից: Թերթեք իր ժամանակի հայկական մամուլը եւ «Վրաստան», «Արշալույս», «Գրական թերթ», այլ պարբերականներում



կհանդիպեք նրա հարյուրավոր հոդվածների, ակնարկների, պատմվածքների եւ բանաստեղծությունների, որոնք նրան հասցրին ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամության, վաստակավոր ուսուցչի կոչման, «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի, դարձրին լեռնաշխարհի տարեգիրն ու արձանագրողը, մատաղ սերնդի կրթողն ու դաստիարակողը:

Ծանոթացեք 60 տարի գրական գործունեությամբ զբաղվող հեղինակի «Իմ Ջավախք, իմ սեր», «Ջավախքի ղողանջներ», «Բարեւ, իմ Աբուլ», «Ղարսեցի հարսը», «Տոհմաճյուղ», «Խոջաբեկ» ժողովածուներին, եւ ձեր դեմ կհառնի ժողովրդական բանաստեղծի, հրաշալի ասացողի, ազգագրագետի արժանավոր, իր գործի կարեւորությունը գիտակցող սրնգահարի կերպարը:

Ո՞վ գիտե, թե քանի ներկայացումներում է խաղացել Ռաֆայելը. ինքը հաշիվը կորցնում էր: Գուցե հարյուր եւ ավելի՞... Բայց չէ՞ որ դրանցից հիսունը ինքն էր բեմադրել, ձեւավորել, զգեստավորել: Դժվար է Ջավախքում (նաեւ նրանից դուրս շատ վայրերում) գտնել մի բնակավայր, ուր ներկայացումներ տված չլիներ, «Զոռի նահապետ Գոչան», «Նամուս», «Աղասի», «Վագիֆ», «Սոս եւ Վարդիթեր», նաեւ իր հեղինակած «Երջանկության ճանապարհին» գործերը ներկայացրած չլիներ... Անհուն սիրով սիրում էր Աբուլը, Փարվանան, ողջ Ջավախքը, Վրաստանը, իր ծնողների ծննդավայր Խոջաբեկ գյուղը, որի ամենամյա տոնակատարությունն ինքն է հիմնադրել:



1997-ին վերականգնվեց թումանյանական «Վերնատունը», Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, որն արդեն 23 տարեկան է: Վրաստանի հայազգի գրողների առաջին խմբում, որ ներկայացվեց պետական պարգեւի, նաեւ Ռաֆայել Ղարսլյանի (Ջավախ) ազգանունն էր. գրական-մշակութային արգասաբեր աշխատանքի համար նա պարգեւատրվեց Վրաստանի «Պատվո» մեդալով: Ավելին, 1998-ից նա նշված միության Ջավախքի բաժանմունքի ղեկավարը դարձավ, «Վերնատուն» տարեգրքի խմբագրական խորհրդի անդամ էր եւ այդ տարիներին անուրանալի գործ կատարեց վիրահայ գրական գործընթացի զարգացման գործում: Նա նաեւ ստեղծեց եւ մի քանի տարի ղեկավարեց պատանի ստեղծագործողների «Գրական ծիլեր» ակումբը, որի արդյունքում մի քանի ջավախքցի ստեղծագործողներ գրքերի հեղինակներ դարձան:

Ռուսաստանի Դաշնության անվանի արդյունաբերող, բարեգործությամբ հայտնի Արմեն Ղարսլյանը, որ պատգամավոր է, մի քանի անգամ շքանշաններով ու մեդալներով պարգեւատրված, իր եղբոր` Թաթուլի հետ (նրանք Ռաֆայելի եղբոր` Գայոսի որդիներն են), շարունակում է օգնել ու աջակցել Նինոծմինդային եւ Խոջաբեկին` այլեւայլ խնդիրների լուծման գործում: Սուրբ Սարգիս եկեղեցու, քաղաքի մարզադաշտի վերանորոգման եւ շինարարության աշխատանքներում անգնահատելի է նրանց նյութական աջակցությունը:

9 տարի առաջ, եղբայրները ձեռք բերեցին շինանյութեր, հիմնավորապես վերանորոգեցին եւ Վիրահայոց թեմին նվիրեցին չափազանց հարկավոր, ազգանպաստ մի կառույց, որը օրհնվեց եւ գործարկվեց 2013-ի նոյեմբերին: Ի պատիվ իրենց հորեղբոր, կրթամշակութային երիտասարդական այդ կենտրոնը անվանվեց «Ռաֆայել Ջավախ», արժանի հուշարձան անվանի մտավորականի, Վրաստանի հայազգի որդի Ռաֆայել Ղարսլյանի, որի կյանքն իր ժողովրդին եւ Վրաստանին ծառայելու հրաշալի օրինակ է: Փառք նրա հիշատակին:

***ԺՈՐԱ ՍՆԽՉՅԱՆ***

***ՎՀԳ «Վերնատուն» միության նախագահ, «Ռաֆայել Ջավախ» կենտրոնի ղեկավար***